

մարձակ և ուրախ փախչել չէ կարելի. փախչել և վազել բարբեր գաղափարներ են արտայայտում:

„И вотъ вдругъ лѣсъ раз-  
ступился передъ нимъ, раз-  
ступился и остался сзади,  
плотный и нѣмой, а Данко  
и всѣ тѣ люди сразу окуну-  
лись въ цѣлое море солнечнаю  
сеньта и чистаго воздуха,  
промытаго дождемъ“.

#### Կուրիեց:

Ужасъ родили женщины  
своимъ плачемъ надъ трупами  
умершихъ отъ смрада и  
надъ судьбой скованыхъ  
страхомъ живыхъ,—и тру-  
сливые слова стали слышны  
въ лѣсу“.

«Կանայքը սկսեցին լալ  
ճահճի գարշահոտոթիւնից մե-  
ռածների վրայ և իրանց լա-  
ցով աւելի սարսափելի էին  
դարձնում կենդանի մնացած,  
անով կաշկանդուած մարդկանց  
վիճակը: Վախկոտ խօսքեր լը-  
սելի էր լինում՝ անտառում...»

(եր. 5):

Ո՞րտեղից ո՞րտեղ: Ի՞նչպէս էք հաւանում մանաւանդ  
շխուքեր լսելի էր լինում...»...

Не своротиТЬ камня съ  
пути думою“.

«Մտածելով քարը ճանա-  
պարհից չի գլորուի» (եր. 6):

Բայց... բաւական է.—ցիտատների շարքը կարող է ուղիղ  
այնչափ տեղ բռնել, որչափ տեղ բռնում է ամբողջ թարգ-  
մանութիւնը, որի սկզբից մինչև վերջը խորին տգիտութեան  
հոտ է փչում: Մենք ուշադրութիւն չէինք դարձնիլ մի այդպի-  
սի չնչին բանի վրայ, եթէ միայն թարգմանչի առաջին թարգ-  
մանական փորձը լինէր այդ. մեր ցանկութիւնն էր սրանով  
լիշեցնել պարունին ոռուական այս առածը. „Не въ свои сани  
не садись!“

Ա. ԱթԱ.

---

Արևել վարդապետ Ղյանեան՝ «Ամուսնութիւն, ամուսնուաւծութիւն եւ  
բաղաբացիւական պատկեր» (երեք յաւելուածով. պետական օրէնքներ, հ. ե-  
կեղեցու կանոններ, ամուսնալուծական դատավարութիւն). Ալքսանդրապոլ.  
1904.

---

Ոչ մի խնդիր հայոց եկեղեցական մատենագրութեան մէջ  
այնքան մեծ հետաքրքրութիւն չէ զարթեցնում իր կենսական

Նշանակութեամբ, ինչպէս ամուսնութեան և ամուսնական օրէնսդըրութեան վերաբերեալ խնդիրները, Հայոց եկեղեցին, որի իրաւասութեան ենթակայ է ամուսնութիւնը իրքեւ եկեղեցական խորհուրդ, սահմանել է հնուց նրա սրբագործութեան համար կանոններ, որով ղեկավարում է նա մինչև այսօր:

Ծօշափելով հասարակական-ընտանեկան կիանքի ամենաէական շահերը՝ ամուսնական օրէնսդրութիւնը քրիստոնէական վարդապետութեան ընդհանուր սկզբունքների հետ ընդդրկել է նաև ժամանակի և ազգի ընթացիկ հասկացողութիւնները, որոնց ազդեցութեան տակ եկեղեցական ժողովներով սահմանուած ամուսնական կանոնները ժամանակի ընթացքում որոշ քաղաքանութիւնների են ենթարկուել, պահպանելով սակայն անխախտ եկեղեցու կանոնական սկզբունքները: Դարերով կուտակուած այդ նիւթը մնացել է մինչև մեր ժամանակը իրքեւ խառն և անկապ կանոնների ժողովածու, որի մէջ իր բնորոշ արտայայտութիւնն է ստացել մեր նախնիքների կրօնական-բարոյական աշխարհայեցողութիւնը և դաւանանքը: Ահա այդ կանոնների առաջին լուրջ հետազօտութիւնը մեղ տուեց հանգուցեալ Վահ. վ. Բաստամեանը, որ իր կեանքի վերջին տարիները բացառապէս զրադուած էր մեր ամուսնական օրէնսդրութեան կնճուոտ խնդիրներով. նրա ըննական տեսութիւնը \*) մինչև այսօր չէ կորցը իր գիտնական նշանակութիւնը և կարող է ծառայել իրքեւ ուղեցոյց հայոց ամուսնական իրաւունքը ուսումնասիրողների համար: Վ. վ. Բաստամեանից յետոյ նոյն նիւթի հիմնական հետազօտութիւնը մենք գտնում ենք մեր ժամանակի նշանաւոր եկեղեցական և մատենագիր Տէր Արիստակէս սրբազան Սեղբակեանի զքքի մէջ \*\*), ուր հեղինակի գիտական պաշարը լուրջ հետևողութեամբ լուսաբանուած է հայոց ամուսնական օրէնսդրութեան վիճելի և մուլթ կէտերի նկատմամբ. այդ աշխատութիւնը ունի նաև այն գերազանց կողմը, որ ամփոփում է իր մէջ մեր հոգեկոր հաստատութիւններում քննուած ամուսնական գործերի վճիռները. այդ վճիռների գիպուածական (կազյուստիկէի) բնոյթը կրկին և կրկին հաստատում է մի նոր ազգային-կրօնական ժողովի գումարման անհրաժեշտութիւնը ամուսնական և այլ հասարակական եկեղեցական խնդիրների վերաբննութեան համար... Անցնելով այս թըռուցիկ գիտողութիւններից Արսէն վ. Ղլտճեանի աշխատու-

\*) «Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան»:

\*\*) «Ամուսնական խնդիրներ», Մասկա, 1891:

թեան՝ պէտք է նախևառաջ նկատենք, որ նա նույիրուած լինելով միւնոյն ինդրին՝ չունի սակայն վերոյիշեալ երկասիրութիւնների ինքնուրոյն բնաւորութիւնը. ինքը հեղինակը, ինչպէս և մասամբ երևում է գրքի յառաջաբանից, աւելի համեստ նպատակ է դրել իրան, այն է՝ տալ ամուսնական կանոնադրութեան համառօս տեսութիւն՝ օգտուելով այդ ինդրի գրականութեան մէջ քիչ թէ շատ յայտնի աղբիւրներից. միայն այստեղ չենք կարող մեր զարմանքը չյայտնել, որ այդ աղբիւրների շարքում չեն գտնուում Արքստակէս եպ. Սեղբակեանի և Վահան վարդ. Բաստամեանի հեղինակաւոր աշխատութիւնները:

Հ. Նլտճեանի գրքի առաջին մասը պարունակում է իր մէջ ամուսնական կանոնների և սովորութիւնների համառօս պատմական տեսութիւնը հին ազգերի մէջ. ապա անցնելով քրիստոնէական դարեշրջանին՝ հեղինակը կանգ է առնուած հայոց եկեղեցական օրէնսգրութեան վրայ և ըննելով հաս ու չնասի ինդիրները եկեղեցական իրաւունքի տեսակէտից՝ գտնուած է, որ ներկայ հայրապետութիւնը ընթանալով ժամանակի ոգու համաձայն՝ արգելում է արինակցական չհասութեան վեցերորդ աստիճանը՝ խոնես կերպով թոյլ տալով հօթերորդը, որ աւելի համապատասխան է Սսի եկեղեցական ժողովի կանոնադրութեան. և խնամիական չհասութիւնը, որ հայոց եկեղեցին երբեմն բարձրացնուած է մինչև եօթերորդ աստիճանը, ամենայն հայոց հայրապետ Մկրտիչ Լը իր կանոնական կոնդակով իշեցրեց մինչև չորրորդ աստիճանը: Անշուշտ հոգեսր պետի այդ ընթացքը շատ գովելի է, եթէ նա բղասում է այն գիտակցութիւնից, որ եկեղեցին չպիտի մնայ անշարժ հնուց սահմանուած կանոնների շրջանում, այլ կենդանի կապը պահպանելով ժողովրդի հետ՝ միշտ պիտի ընթանայ ժամանակի և կեանքի պահանջների համաձայն. բայց այն ևս պէտք է նկատել, որ եթէ գործող օրէնսդրութիւնը հնացել է և այլև չէ համապատասխանուած ժողովրդի կենսական պահանջներին, պէտք է ազգային եկեղեցական ժողով գումարել, որը և կարող է միայն նոր գոհացուցիչ կանոնադրութիւն հրատարակել համայն գործադրութեան համար. իսկ թողնել հինը անփոփխ և ի լրումն հնոյն հայրապետական իշխանութեամբ պէս-պէս դէպքերում նորանոր կանոններ ստեղծել, երբեմն նոյնիսկ հակառակ եկեղեցական օրէնքի հիմնական սկզբունքներին, կը նշանակէ իւրաքանչիւր անդամ օրէնսդրի պաշտօն յանձն առնել, մի բան, որ բարձր է կաթողիկոսի իշխանութիւնից, քանի որ օրէնք հրատարակու-

դը ազգային-եկեղեցական ժողովն է, իսկ հոգևոր իշխանութիւնը օրէնքի գործադրով մարմին է:

Մեզ յայտնի են դէպքեր, երբ արենակցութեան չորրորդ աստիճանն անգամ արգելք չէ եղել պսակի թոյլտւութեան. եկեղեցական օրէնսդրութեան տեսակէտից դա կանոնական հերետիկութիւն է. և ցաւալին այն է, որ գրեթէ միշտ այդ անկանոնութիւնների շարժառիթը եղել է ոչ թէ կեանքի պահանջին բաւականութիւն տալու անաշառ ձգուումը, այլ շահասիրութիւնն ու միայն շահասիրութիւնը. հակառակ հ. Ղլտճեանի կարծիքի՝ ենք հրաժարուում ենք այդպիսի ընթացքը խոհեմ նկատելուց...

Արենակցական ճիւղագրութեան, ինչպէս և խնամիութեան աստիճաններ որոշելը շատ անգամ թիւրիմացութիւնների առիթ է տալիս. պսակի կարգը կատարող քահանան պէտք է կարողանայ ճիշտ որոշել հաս ու չհասի աստիճանը, հակառակ դէպքում եկեղեցական օրէնքով անթոյլատրելի պսակը կարող և՛ թոյլատրելի հրատարակուել, և՛ ընդհակառակը. քահանաններին այդ աշխատանքը դիւրացնելու համար հեղինակը իր գրքում բազմաթիւ օրինակներ է առաջ բերում, որոնց մէջ ամենակընճուռ դէպքերն անգամ քննուած և պարզուած են:

Ամուսնութեան մասին կրելով չէ կարելի լուսութեամբ անցնել և՛ այն տեսակի ամուսնութիւնը, որ այնչափ տարածուած է երոպական երկրներում, այն է՛ քաղաքացիական պըսակը. և հ. Ղլտճեանը (որքան յիշում ենք, դա առաջին փորձն է հայ գրականութեան մէջ) համառու պատմական տեղեկութիւն է տալիս այդ ինսափտուաթ մասին. իհարկէ՝ խնդիրը մանրամասնօրէն ուսումնասիրելու համար պէտք է դիմել կրոպական գրականութեան յայտնի աղբիւրներին (Ուսումնասուանում Հ. Ս. Սյորօն: «Օ գրայանու օրական»),

Հեղինակը գրքի վերջում կցել է իբր յաւելուած թարգմանօրէն ուսուաց պետական օրէնքները ամուսնութեան մասին. մեր կարծիքով աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ օրէնքի բառացի թարգմանութեան փոխարէն հ. Ղլտճեանը մատչելի լեզուով փոխադրէր ուսուաց ամուսնական իրաւունքի էական սկզբունքները, որ թէ հասկանալի կը լինէր հայ ընթերցողի համար, և թէ ինքը այնքան աշխատանք իզուր չէր վատնի ուսուաց օրէնքի ծանը, դժուարամարս թարգմանութեան վրայ. գրեթէ իւրաքանչիւր յօդուածն ընթերցողը պէտք է մի քանի անգամ կարդայ, որ հասկանայ նրա ճիշտ իմաստը (էջ. 130, յօդ. 66 ևայլն), և վերջապէս հայոց լեզուն օրէնքին

յատուկ կարճ և դիւրմբռնելի ոճ տակաւին չէ մշակել, որ կարելի լինէր սահում թարգմանել բնագրից:

Յաւելուածի մէջ կան հին և չգործադրուող օրէնքներ (Եջ 142, յօդ. 165, մ.մ. I և II):

Գրքի վերջին բաժինը նույիրուած է ամուսնական դատավարութեան, մեղանում ամուսնալուծական գործերի քննութիւնն ունի շատ թերթ կողմեր, որոնք սակայն բոլորովին շեշտուած չեն հեղինակի աշխատութեան մէջ. նա միայն արձանագրում է այն, ինչ որ աւանդաբար կատարուել է և մինչեւ այժմ կատարում է առանց քննութեան առնելու, որքան հայոց հոգևոր ատեաններում ընդունուած ձեզ համապատասխան է ժողովրդի ներկայ կացութեան պայմաններին և դատավարական հիմնական սկզբունքներին. բացի դրանից՝ չէ կարելի առանց նկատողութեան թողնել հեղինակի հետեւալ սխալ դատողութիւնները. հ. Ղտնեանի կարճիքով քննիչը ի դէպս, եթէ մեղադրիալը ժիստում է իր դէմ եղած մեղադրանքները, իրաւունք ունի պահանջել, որ նա իր անմեղութիւնն ապացուցանող վկաններ ցոյց տայ (Եջ 216). ուրեմն՝ եթէ Մարկոս մեղադրում է գողութեան մէջ Կիրակոսին, այդ, վերջինը չընդունելով իր վրայ յանցանը՝ պարտական է վկաններով հաստատել, որ ինքը գողութիւն չէ արել...) այդ սկզբունքը հակառակ է դատավարութեան տարրական պահանջներին. մեղադրողից պահանջում է նախ և առաջ, որ նա իր մեղադրանքը հաստատէ դրական փաստերով. դրանից է կախուած ամբաստանեալի մեղաւոր կամ անպարտ ճանաչելու կարելիութիւնը. այստեղ յանցանքը ապացուցանելու ծանրութիւնը (ոուս probandii) ամբողջապէս ընկնում է մեղադրողի վրայ. վկայի պարտականութիւնն է իրան յայտնի և իր աշքերով տեսած դրական փաստերի վկայութիւնը տալ առանց դատողութիւններ անելու բացասական հանգամանքների մասին. օր.՝ նրա վկայութիւնը նշանակութիւն չունի օրէնքի տեսակէտից, եթէ նա շատանայ հաստատելով, որ ինչպէս իրան յայտնի է՝ Կիրակոսը չէ գողացել Մարկոսի իրերը. ուրեմն՝ աւելի ուղիղ կը լինէր, եթէ հ. Ղտնեան այսպէս ասէր. «Թինիչը առաջարկում է (և ոչ պահանջում է) մեղադրեալին, որ նա իր վկաններին ցոյց տայ ի հերքունն իր դէմ յարուցած մեղադրանքից: Քննութիւնը աւարտելուց յետոյ քըննիչը հրաւիրում է իր մօտ մեղադրեալին, կարդում է նրա մօտ ծայրէիծայր ամբողջ գործը, վերջին անգամ նրանից բացատըրութիւն է առնում և ապա արձանագրութիւն կազմելով, որ մեղադրեալին կարդացել է ամբողջ գործը, վերջինը ուղարկում է կոնսիստորիա (Եջ. 217). այս կարգն է հրահանգում հ. Ղլտը-

ճեանը. մնում է անբացատրելի թէ ինչու միայն մեղադրեալին է կարդացում գործը և ոչ երկու կողմերին. չէ որ մեղադրողը, ինչպէս և մեղադրեալը հաւասարապէս շահագրգոռուած են իրանց գործի վերջնական վճռով, ուրեմն և հաւասար իրաւունքներ պիտի վայելեն մինչև գործի քննութեան վախճանը:

Պատահում են դէպքեր, ասում է հ. Ղլտճեանը, երբ ամուսու անբարոյականութիւնը ապացուցող փաստերը կամ իսպառ չմն որոշում և կամ խիստ դժուար. այսպիսի պայմաններում հեղինակը առաջարկում է շրջել մեղադրեալին լաւ ճանաչող ընտանիքների տները, հարցումներ տալ մեղադրուղի բարոյականի նկատմամբ, իմանալ՝ կը ցանկանայի՞ն արդեօք այդպիսի մի անձի հետ մօտիկ ծանօթութիւն ունենալ, իրանց տունը թողնել, երթ ու գալ ունենալ ևյան: Այդպիսի համաճարակ խուզարկութեան (պօալինան օնացք) կարեորութիւնը հ. Ղլտճեանը պաշտպանում է՝ յենուելով քաղաքացիական դատավարութեան 229-րդ յօդուածին (XVII հատ, II մ.): Նախ՝ այդ օրէնքը, այժմ արդէն վերացած, ոչ մի կապ չունի ամուսնական դատավարութեան հետ. նա գործադրուում էր քաղաքացիական պրոցեսում միայն այն տեղերում, ուր տիրում են դատաստանական հին, նախարեֆորմեան կարգեր՝ Բացի դրանից՝ հիմնովին սխալ է հ. Ղլտճեանի կարծիքը, իբր քննիչը ամուսնական գործերում իրաւոնք ունի ինքնարերաբար, առանց կողմերի մասնակցութեան, ամուսնական անհաւատարմութիւնը ապացուցող փաստեր որսալ համաճարակ խուզարկութեան միջոցով. այդպիսի փափուկ խնդիրներում շատ վտանգաւոր է վճընական նշանակութիւն ընծայել դէսից-դէնից հաւաքած կարծիքների, որոնց մէջ ճշմարտութիւնը բամբասանքի և անձնական թշնամութեան հետ խառնուած՝ կարող է աւելի քողարկել քան պարզել ամուսնական գործերի իսկական աստառը. քննիչը պարտական է արձանագրել միայն փաստերը, որ ներկայացնում են երկու շահագրգոռուած կողմերը, առանց իրան թոյլ ապլու գաղտնի, ոստիկանական միջոցներով կողմանակի ապացուցներ հաւաքելու:

Վերջում հարկ ենք համարում նկատելու, որ գրքի լեզուն տեղաեղ ծանր է. աչքի են ընկնում գոենկաբանութիւններ և անյարթ դարձուածքներ. եթէ գիրքը չունենար վերոյիշեալ պակասութիւնները, որոնք ցոյց են տալիս հեղինակի մասնագիտական անպատրաստութիւնը, նա կարող էր ծառայել իբրև օգտաւէտ հրատարակութիւն ժողովրդական ընթերցա-

նութեան համար. դա է մեր վերջնական կարծիքը և. Ղամեա-  
նի աշխատութեան մասին:

8. Ա.

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Արշակ Աթայեան՝ «Սիրոյ-Հովիտը», հրատ. Թիֆլ. Հրատ., Հնկ., 1904, Թիֆլիզ, գ. 3 կ.:
- 2) Erwand Ter Minassiantz: Die Beziehungen der Armenischen Kirche zu den syrischen bis zum Ende des 6. Jahrhunderts. 1904, Liepzig.
- 3) Բժ. Վահան Արծրունի՝ «Խոլերայի մասին», 1904, Թիֆլիզ, գ. 15 կ.:
- 4) Միլ. Իւշկիչ «Տեսակցութիւն», թարգմ. Ա. Գրիգորեան, 1904, Թիֆլիս, գ. 10 կ.:
- 5) Մէլլան՝ «Լէօն-Կայոր», 1904, Ալէքսանդրապոլ, գ. 20 կ.:
- 6) Յովակիմ Սոլօվեան՝ «Ղօնաղլուզ մնաց», վոդքվիլ բ. տպ., 1904, Թիֆլիզ, գ. 20 կ.:
- 7) Բժ. Լ. Մ. Մօնին՝ «Նուէլ Ծննդկաններին», փոխ. դր Վ. Ա., 1904, Թիֆլիզ.
- 8) Գր. ք. Պետրով՝ «Բարի սերմեր», թարգմ. Մամբրէ Վարդապետ, 1904, Վաղարշապատ, գ. 10 կ.:
- 9) Պր. Հովհեր Պեղերսըն՝ «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան», թարգմ. հ. Գարեգին Գարանֆիլեան, 1904, Վիեննա, գ. 1,25 քր.:
- 10) Զիւանու «Բնարը», բ. հ., 1904, Վաղարշապատ, գ. 50 կ.:
- 11) Բժ. Գ. Մարգարեանց՝ «Օգտակար և լիսասակար միկրոբներ», «Օդի փոշին», (նկարներով), 1904, Թիֆլիս, գ. 15 կ.:
- 12) Գէորգ Ղասապեան՝ «Փալուստի և Շուշանիկի պսակուելլ», 1904, Ալէքսանդրապոլ, գ. 12 կ.:
- 13) Լ. Անդրէև՝ «Անդրոնդը», թարգմ. Միլ. Բարիեան, 1904, Ա.-Պետերկուրգ, գ. 10.:
- 14) Բ. Պազանի: 1) «Լոր-դա-լորъ», 2) «Нагой дервишъ», пер. В. и С. Бабіянъ, 1904, Симферополь, ц. 12 կ.
- 15) Եզնիկ քահ. Ալիսապեանց՝ «Ձեռնարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուաստման», 1904, Թիֆլիս, գ. 10 կ.:
- 16) Լէօ «Ա. Մեսրոպ», Թիֆլիս, գինն է 75 կ.: